

էթնիկ ստերեոտիպերն առավել մեծ տարածում ունեն 30-50 տարեկանների շրջանում: Ամեն տարի և համայն հանրապետության սահմաններից դուրս եկող անձանց միջավայրում քացանական էթնիկ ստերեոտիպերի քանակը հանրապետության սահմաններից դուրս չեկողների համեմատությամբ թիւ է: Առաջինները երկրորդներից ավելի շատ են քացանական ստերեոտիպեր վերագրում սեփական էթնոսին:

Ստացված քազմաթիվ էթնիկ ստերեոտիպերը չեն տարբերվում զանազան սոցիալ - ժողովրագրական՝ ներերում գոնվող անձանց վերագրվող ստերեոտիպերից: Սա ցույց է տալիս, որ էթնիկ ստերեոտիպի գոյառնաման հիմնական նախապայմաններից է ցեղանունը /էթնոնիմ/, որն ամրողացնում, ներառում է իրականության քազմաթիվ երկու յթներ թե պատկերային, թե քառային ձևերով:

3. Էթնիկ դիրքորոշումների և էթնիկ ստերեոտիպերի միջև հուզական քենացմամբ համապատասխանություն չնկատվեց: Սա ցույց է տալիս, որ անհամար է՝ ա/ ուսումնասիրել էթնիկ դիրքորոշման կապն էթնիկ ստերեոտիպի ամօղ ջական պատկերի, այլ ոչ միայն քաղաքությունը հետ, թ/ քացանայտել պրոբլեմային իրավի հականությունը վարքի դրապատճանների առաջացման գործում հոգեկան երկու յթների նշանակությունը:

### Հրանուշ Առաքելյան

#### ՀԵՐՉԵԶԱՀԱՅԵՐԻ ՀԱՄԱԿ ԽՄՍՎԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՔԻ ՇԱԽՐՁԸ

1. Վերջին ժամանակներս սովորական ազգագրության մեջ մեծ ուշադրություն է դարձվում էթնիկ ինքնազիտակցության՝ որպես էթնիկ պատկանելությունը որոշող տարրի դերին: Մարդահամարի ժամանակ այս տարրը կամ, որ նույնն է, էթնիկ պատկանելության սուբյեկտիկ որոշումը համարվում է ամենազլիավորը: Սակայն հայտնի են դեպքեր, երբ այս կամ այն իրավի հակում առանձին մարդիկ կամ մարդկանց խմբեր դժվարանում են որոշել իրենց էթնիկ պատկանելությունը: Հենց այս կարգի խմբերից են եղել չերքեզահայերը XIX դ. վերջին-XX դ. սկզբներին:

2. Մինչև XIX դ. կեսերը, ապրելով չերքեզների մեջ, այս խումբն իրեն համարել և անվանել է հայ: Այդ հանգամանքին

խորապես նպաստել է նրանց կրոնական պատկանելությունը և այն հասարակական դիրքը, որ ունեցել են չերքեզների մեջ։ Տվյալ դեպքում կարեղոր է եղել ոչ այնքան ազգային ինքնազիտակցությունը, որը առ ինքնանվանումը, քանի որ այդ ինքնատիպ, , հայկական խավի, , մեջ ընդգրկվող քալոր մարդիկ զբաղեցրել են համեմատաքար քարձը հասարակայան դիրք։

3. Կավերագոերն ու ալանությունները վկայում են, որ ըագմաթիվ չերքեզներ, հույներ, լեռնային հրեաներ և նույնիսկ թաթարներ ընդունել են քրիստոնեություն և մտել այդ ինքնատիպ արտօնյալ դասի մեջ։ Այսպիսով, այսպես կոչված չերքեզահայերի իրական էթնիկ կազմը շատ խայտարծեած է եղել, չնայած հիմնական քաղաղորիչ մասերը կազմել են հայերը և չերքեզները։ Մրանք ըոլորը չերքեզական լեռներում իրենց անվանել են հայ, դրա ներքո Ակատի ունենալով ոչ այնքան էթնիկ պատկանելությունը, որքան լուսավորչական հավատքին դավանելը, քանի որ կարեղոր էր հատկապես,, հայ,, կոչվելը, մի հանգամանք, որ պայմանավորված է եղել հատկապես սոցիալ-տնտեսական Հանրաժեշտությամբ։

4. XIX դ. պկզըներին, քաղաքական նոր փոփոխված իրադրության մեջ, չերքեզահայերը հյուսիս-արևմտյան Կովկասում զրկվում են իրենց իրավունքներից և աստիճանաբար լքում լեռները։ Նրանց հիմնական մասը 1839թ. հիմնադրում է Արմավիրը։ Նոր պայմաններում վերանում է նրանց,, հայ,, լինելու սոցիալական անհրաժեշտությունը։ Էթնո-մշակութային իմաստով ամենատարբեր տարրերից քաղկացած այս խումբը կանգնում է իր հեղհեղուկ, անորոշ էթնիկ պատկանելությունը որոշակիացնելու անհրաժեշտության առաջ։ Ակսում է գիտակցվել ինչպես չերքեզական մշակույթի խորթությունը, այնպես էլ,, հայ,, ինքնանվանման անհամապատասխանությունը։

5. Այս իրավիմակում մի ինչ-որ ժամանակաշրջան չերքեզահայերը ներքուստ համախմբում են, հակադրելով իրենց էթնիկ,, ես,,,-ը թե հայերին, թե չերքեզներին։ Սուածնում է,, մենք-նրանք,, զգացումը ինչպես այս, այնպես էլ մյուս էթնոսի հանդեպ։ Աստիճանաբար ձևավորվում է որակապես նոր էթնիկ ինքնազիտակցություն, նրանց միավորում է հատկապես այն, որ իրենք,, չերքեզահայեր,, են, ինքնանվանում, որը, փաստորեն, մատնանշում է էթնո-մշակութային իմաստով նոր խմբի առաջացումն ու սահմանազատումը, մի կողմից՝ չերքեզներից, մյուս կողմից՝ հայերից։